ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 01.08.2024թ. հ. 219-2024թ. գրության, տեղեկացվում է, որ իրականացված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքի Խանջյան փող. 8/1 հասցեում գտնվող ակումբում Ա/Ձ Ազատ Ադամյանը հանրային սննդի կազմակերպումը և իրացումը, ինչպես նաև ոգելից խմիչքների վաճառքն իրականացնում է առանց համապատասխան թույլտվությունների, ինչի կապակցությամբ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում հարուցվել են վարչական վարույթներ:

Տեղեկացվում է, որ տեղատեսության արդյունքում նշված օբյեկտում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180 հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով իրավախախտում չի հայտնաբերվել: Այնուամենայնիվ նշված ակումբում գործունեություն իրականացնող Ա/Ձ Ազատ Ադամյանը գրավոր և բանավոր զգուշացվել է բնակչության անդորրը և համակեցության կանոնները պահպանելու վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ պարբերաբար կիրականացվեն շրջայցեր և նշված օբյեկտում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180 հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով իրավախախտում հայտնաբերելու դեպքում՝ կհարուցվի վարչական վարույթ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ